ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
08.12.2026թ. կնքված N «ԵՔ-ԲՄԱԾՁԲ-25/44» գնման պայմանագրի

ք. Երևան «29» ապրիլի 2026թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ. Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից «ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Մ. Կարապետյանի (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին՝ (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով գնումների մասին ՀՀ օրենսդրությունը, 08.12.2026թ. կնքված N «ԵՔ-ԲՄԱԾՁԲ-25/44» գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.14. կետերը, ինչպես նաև Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի գրությունը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Պայմանագրով նախատեսված Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի **Վարդանանց 5Ա** հասցեի բակային ֆուտբոլի դաշտի հիմնանորոգման աշխատանքների կատարման դիմաց վճարման ենթակա գումարը սահմանել **71764638 (յոթանասունմեկ միլիոն յոթ հարյուր վաթսունչորս հազար վեց հարյուր երեսունութ) ՀՀ դրամ**՝ ներառյալ ԱԱՀ-ն, համաձայն սույն համաձայնագրի N 1 հավելվածի:

1.2 Հաստատել սույն համաձայնագրի վճարման ժամանակացույցը՝ համաձայն N 1 հավելվածի:

2 Այլ պայմաններ

2.2 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.3 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

*3 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Երևանի քաղաքապետարան | «ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ |
| ք. Երևան, Արգիշտիի փ. 1 | ք. Երևան, Նոր Նորք վ/շ, |
| ՀՀ ֆինանսներ նախարարության | Միկոյանի փ., 15շ, 26 բն. |
| գործառնական վարչության | «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ |
| Հ/Հ 900012213709 | Հ/Հ 250011452500100 |
| ՀՎՀՀ 02593108 | ՀՀՎՀ 01048173 |
| Վ. Պապիկյան ---------------- (ստորագրություն) Կ.Տ. | Մ. Կարապետյան ---------------- (ստորագրություն) Կ.Տ. |

Հավելված 1
08.12.2026թ. կնքված N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-25/44 գնման պայմանագրի
29 ապրիլի 2026 թ. կնքված N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հ/Հ | Գնման առարկայի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2026թ. ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | Ընդամենը տարեկան |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | |
| 1 | Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Վարդանանց 5Ա հասցեի բակային ֆուտբոլի դաշտի հիմնանորոգման աշխատանքներ | - | - | - | 35,882,319 | 35,882,319 | 35,882,319 | 53,823,479 | 53,823,479 | 53,823,479 | 71,764,638 | 71,764,638 | 71,764,638 | 71,764,638 |

Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսներ նախարարության
գործառնական վարչության
Հ/Հ 900012213709
ՀՎՀՀ 02593108

Վ. Պապիկյան ----------------
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ
ք. Երևան, Նոր Նորք վ/2,
Միկոյանի փ., 152, 26 բն.
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 250011452500100
ՀՎՀՀ 01048173

Մ. Կարապետյան ----------------
(ստորագրություն)
Կ.Տ

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ARMSWISSBANK

«23» 04 2026 թ. N 3721/10/5

ԵՐԱՇԽԻՔ N 26-0360
**(որակավորման ապահովում)**

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ԵՔ-ԲՄԱՇՁԲ-25/44 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքված N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-25/44 պայմանագրի անբաժանելի մասը կազմող կնքվելիք թիվ 1 Համաձայնագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):
2. Երաշխիքով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 25,814,620.00 (քսանհինգ միլիոն ութ հարյուր տասնչորս հազար վեց հարյուր քսան) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:
3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:
4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:
5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-25/44 ծածկագրով կնքված պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 03/02/2027 թվականը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ gor.muradyan@yerevan.am էլեկտրոնային փոստի հասցեին:
6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝
   1) թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-25/44 ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.
   2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:
7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:
8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝
   1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.
   2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:
9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:
10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:
11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր տնօրեն Գևորգ Մաչանյան

ARMSWISSBANK 02574955

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ARMSWISSBANK

«23» 04 2026 թ. N 3722/10/5

ԵՐԱՇԽԻՔ N 26-0361
(պայմանագրի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքված թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-25/44 պայմանագրի անբաժանելի մասը կազմող կնքվելիք թիվ 1 Համաձայնագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:
2. Երաշխիքով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 8,604,880.00 (ութ միլիոն վեց հարյուր չորս հազար ութ հարյուր ութսուն) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:
3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:
4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:
5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է բենեֆիցիարի և պրիցնիպալի միջև կնքված թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-25/44 պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 03/02/2028 թվականը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ gor.muradyan@yerevan.am էլեկտրոնային փոստի հասցեին:
6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝
   1) թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-25/44 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.
   2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:
7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:
8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝
   1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.
   2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:
9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:
10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:
11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր տնօրեն Գևորգ Մաչանյան

info@armswissbank.am
www.armswissbank.am

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ, Երևան 0010, Վ. Սարգսյան փ. 10
Հեռ.՝ +374 60 757 000, +374 11 757 000
Ֆաքս՝ +374 10 529591